ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԲՈԼՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Հունվարի 19-ին, Ստամբուլում տեղի ունեցած Կ. Պոլսի «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր և ճանաչված լրագրող Հրանտ Դինքի սպանության ողբերգական առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Կ.Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին՝ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի իր վշտակցությունը հայտնելով Մեսրոպ Պատրիարքին, պոլսահայ համայնքին, Դինքի սգացյալ ընտանիքին և հարազատներին, «Ակօս» շաբաթաթերթի խմբագրակազմին:

Նորին Սրբության ցավակցականում մասնավորապես ասվում է. «*Խորը ցավով լսեցինք «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության մասին: Նրա անժամանակ և եղերական մահը ցնցել է բոլորիս: Սգում ենք մեր ողջ ժողովրդի հետ կորուստը ևս մեկ մտավորական անմեղ զոհի: Խորին վրդովմունքով դատապարտում ենք դավադիր այս սպանությունը, որը մեր ժողովրդից խլեց շնորհալի, քաջասիրտ իր զավակին, ով իր գրիչը հավատով ծառայեցնում էր ի սեր արդար ու ազատ, խաղաղ կյանքի և ավելի լավ աշխարհի:*

Մենք նույնպես ակնկալում ենք, որ Թուրքիո իշխանությունները պիտի բացահայտեն և օրենքի խստությամբ պատժեն հանցագործներին»:

Հայրապետական մասնավոր տնօրինությամբ, հունվարի 21-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր թեմերում Սուրբ և Անմահ Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն բարեհիշատակ Հրանտ Դինքի հոգու խաղաղության համար:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ